ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2014թվականի N 24 - Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

2014 թվականին համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 140.000 /հարյուր քառասուն հազար / դրամ :

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Մ. Ավագյան

Վ. Սիմոնյան

Գ. Կիրակոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2014թվականի N 25-Ն

ՀՆԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով , 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով , << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /2015թվական / ՝ համաձայն հավելվածի .
2. Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 2013թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 23-Ն որոշումը:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Մ. Ավագյան

Վ. Սիմոնյան

Գ. Կիրակոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի
Հնաբերդ համայնքի ավագանու
2014թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 25-Ն որոշմամբ

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /2015 թվական/

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 7 ,
2. Աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ /	Տարեկան աշխատավարձ /ՀՀ դրամ/
1.	Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար / ծածկ.1.2-1/	1	113.000	1 356 000
2.	Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկ.3.1-1/	1	108.000	1 296 000
3.	Օպերատոր	1	70.850	850 200
4.	Գրադարանավար	1	70.850	850 200
5.	Հարկահավաք	1	66.150	793 800
6.	Հավաքարար	1	70.850	850 200
7.	Պահակ	1	66.150	793 800
	Ընդամենը	*7*	*565 850*	*6 790 200*

Աշխատակազմի քարտուղար՝ Ն.Նաղդալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2014թվականի N 26-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ , 10-րդ և 11-րդ հոդվածներով , <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի 2015թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Մ. Ավագյան

Վ. Սիմոնյան

Գ. Կիրակոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արարատի մարզի
Հնաբերդ համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 26-Ն որոշման

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի 2015թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7 500 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1 500 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1 500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1 500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝ օրական 350 դրամ ՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի/սեղմված բնական կամ հեղուկացված նավթային/ մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային/ վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 150 000 դրամ:

3)խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 30 000 դրամ ,

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 000 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

10. Հնաբերդ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար փոխհատուցման վճար՝ 1 000 դրամ ,

2) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 դրամ ,

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 1 000 դրամ :

4) աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 20 դրամ :

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Նաղդալյան